ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ծաղկաձոր **26/01/2021**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 6 անդամներ:

Բացակա էր՝ Արմեն Գալստյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Արթուր Հարությունյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Գարիկ Բաղալյանը

Լսեցին
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի ԹԻՎ 2 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Հաստատել համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 26-ի թիվ 2 արտահերթ նիստի օրակարգը՝

1. Արցախյան 2-րդ պատերազմի մասնակից ժամկետային զինծառայողներին, կցագրված զինապարտներին և կամավորներին դրամական օգնություն տրամադրելու մասին:

2. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

3. Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու, Ծաղկաձոր համայնքի ավագանու 2015 թվականի օգոստոսի 17-ի թիվ 49 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին :

4. Ծաղկաձոր համայնքային գրադարանի շենքի ջեռուցման համակարգի վերանորոգման և ներքին հարդարման աշխատանքներ իրականացնելու համաձայնություն տալու մասին:

5. Ծաղկաձոր համայնքի փողոցների կոյուղագծերի կապիտալ վերանորոգման, Նոր Թաղամասի և Պահլավունյաց փողոցի նոր կոյուղագծերի կառուցման աշխատանքներ իրականացնելու համաձայնություն տալու մասին:

6. <<Ծաղկաձորի նախադպրոցական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության ջեռուցման համակարգի վերանորոգման համաձայնություն տալու մասին:

7. Ծաղկաձոր համայնքի բազմաբնակարան շենքերի մուտքերում ավտոմատ կոդային փականների տեղադրման աշխատանքներին համաձայնություն տալու մասին:

8. Ծաղկաձոր համայնքի տարածքում տեսախցիկներ տեղադրելու համաձայնություն տալու մասին:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 08/

Լսեցին
ԱՐՑԱԽՅԱՆ 2-ՐԴ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍՆԱԿԻՑ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ԿՑԱԳՐՎԱԾ ԶԻՆԱՊԱՐՏՆԵՐԻՆ ԵՎ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 74-Ն որոշումը՝

Արցախյան 2-րդ պատերազմի մասնակից Ծաղկաձոր համայնքում հաշվառված ժամկետային զինծառայողներին, կցագրված զինապարտներին և կամավորներին տրամադրել դրամական աջակցություն՝ յուրաքանչյուրին 40 000 դրամի չափով՝:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 09/

Լսեցին
ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 10-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 60-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2021 թվականի հունվարի 15-ի N 1/փ-3 եզրակացությունը և Կարեն Գասպարյանի դիմումը՝

1.Ծաղկաձոր համայնքի գլխավոր հատակագծում կատարել հետևյալ փոփոխությունը՝ Ծաղկաձոր համայնք, Վլադիմիր Հարությունյան փողոցի թիվ 2/10 հասցեում գտնվող Կարեն Գասպարյանի սեփականության իրավունքով պատկանող 1,3754 հա մակերեսով

հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը հատուկ պահպանվող, հանգստի համար նախատեսված հողերից փոփոխել բնակավայրերի, բնակելի կառուցապատման համար նախատեսված հողերի:

2.Նշված փոփոխությունը կատարել նաև համայնքի կադաստրային քարտեզում՝ 07-005-0025-0091 կադաստրային ծածկագրով պատկերված հողամասի 1,3754 հա մակերեսով հատվածի նպատակային և գործառնական նշանակությունը հատուկ պահպանվող, հանգստի համար նախատեսված հողերից փոփոխել բնակավայրերի, բնակելի կառուցապատման համար նախատեսված հողերի:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 10/

Լսեցին

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 25-Ի ԹԻՎ 49 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով Ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2016 թվականի հունիսի 02-ի թիվ 631-Ն որոշմամբ և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1. Ծաղկաձոր քաղաքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից ստեղծել խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով:
2. Հաստատել խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անհատական կազմը՝

Նախագահ Արտաշես Խաչատրյան /համայնքի ղեկավարի օգնական/,

Անդամներ Լեյլի Խաչատրյան /համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ/,

Վարսիկ Հայրապետյան /համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ/

Սուսաննա Եգորյան /Ծաղկաձորի միջնակարգ դպրոցի տնօրեն/,

Աննա Ասատրյան /<<Ծաղկաձորի նախադպրոցական ուսումնական հաստատություն> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն/,

Մանյա Իսրայելյան /<<Ծաղկաձորի նախադպրոցական ուսումնական հաստատություն> համայնքային ոչ առևտրային կազմակերպության հոգեբան/:

3. Ուժը կորցրած ճանաչել Ծաղկաձորի համայնքի ավագանու 2015 թվականի օգոստոսի 25-ի «Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին և Ծաղկաձոր համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 45 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 49 որոշումը:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 11/

Լսեցին
ԾԱՂԿԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՇԵՆՔԻ ՋԵՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ. ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ կետով, 46-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

Ծաղկաձոր համայնքի ղեկավարին տալ համաձայնություն՝ Ծաղկաձորի համայնքային գրադարանի շենքի ջեռուցման համակարգի վերանորոգման և ներքին հարդարման աշխատանքներ իրականացնելու համար:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 12/

Լսեցին
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԿՈՅՈՒՂԱԳԾԵՐԻ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ, ՆՈՐ ԹԱՂԱՄԱՍԻ ԵՎ ՊԱՀԼԱՎՈՒՆՅԱՑ ՓՈՂՈՑԻ ՆՈՐ ԿՈՅՈՒՂԱԳԾԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ. ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով՝

Ծաղկաձոր համայնքի ղեկավարին տալ համաձայնություն՝ Ծաղկաձոր համայնքի փողոցների կոյուղագծերի կապիտալ վերանորոգման, Նոր թաղամասի և Պահլավունյաց փողոցի նոր կոյուղագծերի կառուցման աշխատանքներ իրականացնելու համար:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 13/

Լսեցին
<<ԾԱՂԿԱՁՈՐԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՋԵՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ. ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասով, 46-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

Ծաղկաձոր համայնքի ղեկավարին տալ համաձայնություն <<Ծաղկաձորի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության ջեռուցման համակարգի վերանորոգման համար:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 14/

Լսեցին

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՄՈՒՏՔԵՐՈՒՄ ԱՎՏՈՄԱՏ ԿՈԴԱՅԻՆ ՓԱԿԱՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասով՝

Ծաղկաձոր համայնքի ղեկավարին տալ համաձայնություն Ծաղկաձոր համայնքի Օրբելի եղբայրների նրբանցք, թիվ 2 և թիվ 6, Գրիգոր Մագիստրոս փողոց թիվ 13, Խաչատուր Կեչառեցի թիվ 8, Խաչիկ Մուրադյան, թիվ 5 բազմաբնակարան շենքերի մուտքերում ավտոմատ կոդային փականների տեղադրման աշխատանքների իրականացմանը:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 15/

Լսեցին

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՍԱԽՑԻԿՆԵՐ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ կետով՝

Ծաղկաձոր համայնքի ղեկավարին տալ համաձայնություն Ծաղկաձոր համայնքի տարածքում տեսախցիկների տեղադրելու համար:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 16/

Ավագանու անդամներ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԳԱՌՆԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԱՐՄԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՐՄԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Համայնքի ղեկավար

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Գարիկ Բադալյանը